| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Բասպետ» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 28.859.385 դրամ: Մարզադահլիճի վինիլային հատակի տեղադրման համար կնքվել է պայմանագիր «Արոն» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 1.580.000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ-945-Ա**
**քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 3/3.8-1/15506-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 28-ի N 02/7400-12, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2012 թվականի նոյեմբերի 27-ի N 05/3.1/4881-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/12780-12 և Երևանի քաղաքապետարանի 2012 թվականի նոյեմբերի 27-ի N 02/56760հ եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) իրականացվող՝ 1.25 մլրդ դրամ ընդհանուր արժողությամբ «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեսչյան արքիտեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02705356) 2012 թվականի հուլիսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մշակութային կենտրոնի կառուցման նախագծային աշխատանքների իրականացում՝ 40 մլն դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԼԱՎՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02577772) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N 111-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մշակութային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննության աշխատանքների իրականացում՝ 800000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների իրականացում՝ 180268478 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ակար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02200642) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է եռակցման էլեկտրոդի մատակարարում՝ 5680000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԳԱԷՐՆՈՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02250036) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնի մատակարարում՝ 117136000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՄԱՌՄ-ՔԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04716874) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» տուֆ քարի մատակարարում՝ 2925000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՊԱՏ գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201962) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պենզաբլոկի մատակարարում՝ 9104000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ռազար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03307645) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցեմենտի մատակարարում՝ 8712000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Ս. Սարգսյանի կողմից

«20» նոյեմբերի 2012թ.

«Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցման»
ծ ր ա գ ի ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանում ստեղծել Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտ, որը պիտի դառնա լրջագույն կենտրոն թե՛ հայ, թե՛ օտար ուսումնասիրողների համար, որտեղ մեր ժողովուրդը և երկիր այցելող հյուրերը հնարավորություն կունենան ծանոթանալու Կոմիտասից անցած ամբողջ ժառանգությանը: Համալիրը կունենա թանգարանային մաս, գիտ ահետազոտական կենտրոն, համերգային դահլիճ, երաժշտական ստուդիա, գրադարան, հրատարակչություն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի , տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Սիրիահայ բարերար Կաբրիել Ռ-հանեսի Ղեներջի (Սիրիայի Արաբական Հանրապետություն, քաղ. Հալեպ, անձնագիր՝ N003005753 տրված 16/08/07թ) և այլ անհատներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Փյունիկ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Երվանդ Քոչարի փողոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | քաղ. Երևան, Արշակունյաց 28՝ քաղաքաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 1.25 մլրդ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012 թվական հուլիսի 12-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Նախագծահաշվարկային աշխատանքներ՝ 2012 թվականի հուլիսի 12-ից մինչև դեկտեմբերի 4-ը – 40 մլն դրամ:<br>2. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 2012 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 1-ը - 1183 մլն դրամ:<br>3. Կահավորում՝ 2013 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 30-ը – 27 մլն դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Նախագծահաշվարկային աշխատանքներ՝ 40 մլն դրամ:<br>2. Շինարարական աշխատանքներ՝ 180264478 դրամ:<br>3. Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 902731522 դրամ:<br>4. Շինարարական նյութերի ներմուծում՝ 100 մլն դրամ:<br>5. Կահավորում՝ 27 մլն դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Երևանի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և բարերարներին կներկայացվեն հաշվետվություններ՝ ծրագրի իրականացման ընթացքի ու ավարտի վերաբերյալ: |

կազմեց Ս. Նալչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ-946-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-1/15446-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/12779-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2013թ. մարտ» բառերը փոխարինել «2013թ. հոկտեմբեր» բառերով:

2. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (քաղ. Երևան, Թամանյան 2ա, բն. 2, ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեխտրանս» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405029) 2012 թվականի նոյեմբերի 16-ին կնքված՝ N 32 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մոնտաժային, բեռների բարձման, բեռնաթափման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 10 մլն դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Պայքար Գրիգորյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 52175959) 2012 թվականի նոյեմբերի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից ապրանքների մատակարարում՝ 14695280 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ջի ընդ Էյ ինքորփորեյշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01839901) 2012 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից ապրանքների մատակարարում՝ 28533526 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Սարգիս-Արա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05013865) 2012 թվականի նոյեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Անի» ծիրանագույն տուֆ քարից ապրանքների մատակարարում՝ 14742743 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գաշես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04222383) 2012 թվականի նոյեմբերի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 93405450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 947 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 23-ի N 3-5/916, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 12-ի N 3/3.8-2/14674-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 14-ի N 02/7102-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի նոյեմբերի 13-ի N ՖԲ/ԱնՄ-5/8013-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 12-ի N ՎՄ/3-6/11972-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԱԳԱՊԵ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 640000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագիրը (կցվում է):

2. «ԱԳԱՊԵ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության
տնօրենների խորհրդի կողմից
«_7_» _նոյեմբերի_, 2012 թ.

# «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔ»

| | | |
|---|---|---|
| *1.* | *Ծրագրի նպատակը* | ➢ Ծրագրի նպատակն է բարելավել Քաշաթաղի շրջանի անապահով ընտանիքների սոցիալական պայմանները.<br>➢ Նվազեցնել շրջանում աղքատության և գործազրկության մակարդակը, ինչպես նաև բնակիչների արտահոսքը:<br>➢ Աջակցել Հայ Առաքելական եկեղեցուն՝ շրջանի երեխաների քրիստոնեական դաստիարակության գործում. |
| *2.* | *Ծրագրի բարեգործական որակման նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի* | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| *3.* | *Բարեգործը.* | Ծրագիրը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների միացյալ մեթոդիստական եկեղեցու Հյուսիսային Կարոլինայի և Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի թեմերի կողմից: |
| *4.* | *Ծրագիրը կատարողը.* | Ծրագիրն իրականացնում է ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպութան ՀՀ մասնաճյուղը, ՀՎՀՀ 01513717, ք. Երևան, Նիկոլ Դումանի 24 ա: |
| *5.* | *Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը* | Ծրագիրն առնչվում է սոցիալական բնագավառին և ընդգրկում է ԼՂՀ Քաշաթաղի շրջանը: |
| *6.* | *Ծրագրի բյուջեն* | Ծրագրի բյուջեի կողմնորոշիչ արժեքն է 640,000 ԱՄՆ դոլար:<br>2013 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար,<br>2014 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար,<br>2015 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար<br>2016 թվականի կողմնորոշիչ արժեքն է 150,000 ԱՄՆ-ի դոլար<br>40,000 ԱՄՆ դոլարը ավտոմեքենաների ձեռք բերման կողմնորոշիչ արժեքն է: |
| *7.* | *Բարեգործություն ստացողը* | Ծրագրի շահառուներն են ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր վարչական կենտրոնի և գյուղական համայնքների սոցիալապես անապահով ընտանիքները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագրերի մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: Ծրագրի շահառուներ են հանդիսանում 1000-ից ավելի ընտանիքներ: |
| *8.* | *Ծրագրի իրակացման տևողությունը* | Ծրագիրն սկսվելու է 2013 թվականի հունվարի 1-ից և ավարտվելու 2016 թվականի դեկտեմբերի 31-ին: |
| *9.* | *Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը.* | 1. Աջակցություն ԼՂՀ Քաշաթաղի շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին, «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ին, ծերերին, փախստականներին, Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին, մասնավորապես ծրագրի շրջանակներում բեռների ներմուծում /տղամարդու, կանացի և երեխայի |
| | | հագուստ, սնունդ, անկողնային, հիգիենայի և դպրոցական պարագաներ/ և անհատույց բաշխում: Ժամկետը՝ 2013-2016 թթ.: Կողմնորոշիչ արժեքը՝ 525,000 ԱՄՆ դոլար:<br>2. Բժշկական պարագաների և սարքավորումների ներմուծում կամ գնում տեղական շուկայում և անհատույց հատկացում ԼՂՀ Քաշաթաղի շրջանային բուժմիավորմանն ու գյուղական բուժկետերին: Կողմնորոշիչ արժեքը՝ 25000 ԱՄՆ դոլար:<br>3. Աջակցություն Հայ Առաքելական եկեղեցուն՝ բոլոր հնարավոր պայմանների ստեղծմամբ, զբաղվելու երեխաների և պատանիների քրիստոնեական դաստիարակությամբ և նրանց ետ պահելու շրջապատի անցանկալի բացասական ներգործություններից: Այդ նպատակով լիարժեք պայմանների ստեղծում «ԱԳԱՊԵ»-ի միջոցներով կառուցված Բերձորի քրիստոնեական դաստիարակության մանկական կենտրոնում՝ համապատասխան մասնագետների վարձատրության և սարքավորումների (համակարգիչներ, կարի մեքենաներ, հեռուստացույց, լսա-տեսասարքավորումներ, գործագործական դազգահներ, համապատասխան նյութեր և պարագաներ) տրամադրմամբ՝ շրջանի *Հայ Առաքելական եկեղեցու* հոգևոր առաջնորդի աչալուրջ հսկողության և ղեկավարության ներքո երեխաների քրիստոնյա և հայեցի դաստիարակությունը կազմակերպելու, շրջանի երեխաների հոգևոր և մշակութային դաստիարակությանն ու հետավարտական մասնագիտական հմտությունների ձեռք բերմանը օժանդակելու համար, ամեն տարի ներգրավելով մոտավորապես 100 երեխաների: Ժամկետը՝ 2013-2016 թթ.: Կողմնորոշիչ արժեքը՝ 25000 ԱՄՆ դոլար:<br>4. Բազմակողմանի աջակցություն պատերազմի, բնական աղետների և տնտեսական ճգնաժամի պատճառով փողոցում հայտնված երեխաներին՝ բարեխնամ գործունեությանը զուգահեռ ծավալելով քրիստոնեական, բարոյահոգեբանական, մտավոր դաստիարակություն, ինչպես նաև երեխաների՝ հետուսումնական մասնագիտական հմտությունների ձեռք բերում: Ժամկետը՝ 2013-2016 թթ.: Կողմնորոշիչ արժեքը՝ 25000 ԱՄՆ դոլար: |
| *10.* | *Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը* | 1. Բեռների /տղամարդու, կանացի և երեխայի հագուստ, սնունդ, անկողնային, հիգիենիկ և դպրոցական պարագաներ/ ներմուծում և անհատույց բաշխում ԼՂՀ Քաշաթաղի շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին, ծնողազուրկ և միակողմանի ծնողազուրկ երեխաներին, միայնակ մայրերին, ծերերին, փախստականներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, այդ թվում գրենական պիտույքների տրամադրում սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցական տարիքի երեխաներին: Կողմնորոշիչ արժեքը՝ 525,000 ԱՄՆ դոլար:<br>2. Բժշկական պարագաների և սարքավորումների ներմուծում կամ գնում տեղական շուկայում և անհատույց հատկացում ԼՂՀ Քաշաթաղի շրջանային բուժմիավորմանն ու գյուղական բուժկետերին: Կողմնորոշիչ արժեքը՝ 25000 ԱՄՆ դոլար:<br>3. Աջակցություն Հայ Առաքելական եկեղեցուն՝ Բերձորի քրիստոնեական դաստիարակության մանկական կենտրոնով: Անհրաժեշտ մասնագետների աշխատավարձի, սարքավորումների և պարագաների տրամադրում՝ համակարգչային, ձեռքի աշխատանքի, գորգագործության, շախմատի, կարուձևի և այլ խմբակների գործունեությունն ապահովելու համար: Կողմնորոշիչ արժեքը՝ 50000 ԱՄՆ դոլար:<br>Ծրագրի շրջանակներում վերոնշյալ բեռների ներմուծում և անհատույց բաշխում: Ծրագրի շրջանակներում նախատեսվող յուրաքանչյուր գործարքի, ինչպես նաև բեռների ներմուծման |

| | | |
|---|---|---|
| | | վերաբերյալ ՀՀ ԿԲԾՀԿ և շահագրգիռ նախարարություններ կներկայացվեն նախապես կազմված և հաստատված պայմանագրեր համապատասխան կազմակերպությունների հետ՝ հաստատված կարգին համապատասխան, մանրամասն ստացվող բեռների ցուցակը և բաշխման ցուցակն ըստ շահառուների: |
| **11.** | *Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր* | Կազմակերպության 1996 թվականի Դոջ–Ռեմ մակնիշի մարդաբեռնատար ավտոմեքենան 16 տարի և 2002 թվականի Գազել մակնիշի միկրոավտոբուսը 10 տարի ծառայել են բարեգործական ծրագրերի իրագործմանը՝ անհաշվելի անգամներ ճամփորդելով Երևան-ԼՂՀ/Քաշաթաղ, Բերձոր-գյուղեր ճանապարհներով, 90-ականների կեսերի դժվարանցանելի մայրուղիներով և առ այսօր վտանգավոր և դժվարանցանելի գյուղական ճանապարհներով, մարդասիրական բեռների և բնակիչների տների վերանորոգման նպատակով այցելած կամավորների շինարարական խմբերի տեղափոխումը կազմակերպելու նպատակով, ինչը ֆիզիկական մաշվածության է ենթարկել վերոնշյալ տրանսպորտային միջոցները և նորերի ձեռք բերման՝ ծրագրերի իրագործման համար կենսական անհրաժեշտության խնդիր առաջացրել: Սա է պատճառը, որ տնօրենների խորհուրդը որոշել է երկու նոր կամ համեմատաբար նոր ավտոմեքենաներ՝ մարդաբեռնատար ավտոմեքենա և միկրոավտոբուս տրամադրել կազմակերպությանը: Երկու ավտոմեքենաների կողմնորոշիչ ընդհանուր արժեքն է 40,000 ԱՄՆ դոլար (կներմուծվեն կամ կգնվեն տեղական շուկայում): |
| **12.** | *Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ* | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության, ՀՀ Սփյուռքի նախարարության, ԼՂՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության, ԼՂՀ Արտաքին Գործերի նախարարության, ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչության, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի և Բերձորի քաղաքապետարանի հետ, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու թեմերի՝ մասնավորապես Արցախի թեմի հետ: |
| **13.** | *Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը* | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների միացյալ մեթոդիստական եկեղեցու Հյուսիսային Կարոլինայի և Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի թեմերի, կազմակերպության տնօրենների խորհրդի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ Ն. Մելքոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 948 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 19-ի N 3/3.8-2/14999-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 19-ի N ԴԴ/22/11470-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 15-ի N ՎՄ/3-6/12238-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ-ի մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքի (35 կգ ընդհանուր քաշով, 2098.26 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 75 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Դեղորայքը հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Աշան գյուղի բուժկետին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 949 -Ա**

**քաղ. Երևան**

## «ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 19-ի N 3/3.8-2/15002-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի նոյեմբերի 19-ի N ՖԲ/ԱնՄ-5/8258-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N ՎՄ/3-6/121363-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Անգլիայից TBS բարեգործական կազմակերպության կողմից «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության հասցեով ստացված օրացույցների (1 տեղ, 430 կգ ընդհանուր քաշով, 192.85 ֆունտ ստեռլինգ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 660 ֆունտ ստեռլինգ, բաշխման ցանկը կցվում է, ՄԾՓ տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Կոտայքի, Շիրակի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Բաշխման ցանկ

| N | Անվանում | Օրացույց (հատ) | Գումար (ֆունտ) |
|---|---|---|---|
| 1 | ք. Երևան Հայաստանի Մանկապատանեկան Մշակութային Հիմնադրամ | 500 | £9.50 |
| 2 | ք. Երևան «Եղբայրություն» Քրիստոնեական Մշակութային Հիմնադրամ | 800 | £15.20 |
| 3 | Արարատի մարզ՝ Երասխի Գյուղապետարան | 150 | £2.85 |
| 4 | Արագածոտնի մարզ՝ Արտենիի Գյուղապետարան | 800 | £15.20 |
| 5 | Արարատի մարզ՝ Լանջանիստի Գյուղապետարան | 80 | £1.52 |
| 6 | ք. Վանաձոր «Լոռվա Լույս» Բարեգործական Միություն» Հ/Կ | 200 | £3.80 |
| 7 | Քրիստոնեական Մշակութային Դաստիրակության Կենտրոն | 400 | £7.60 |
| 8 | Շիրակի մարզ գ. Բայանդուր «Իմաստուն Կույսեր» Ծնողազուրկ Հաշմանդամ Երեխաների Հ/Կ | 500 | £9.50 |
| 9 | ք Երևան «Շողիկ» ՀԲՀԿ | 1800 | £34.20 |
| 10 | Արագածոտնի մարզ՝ Աշնակի Գյուղապետարան | 400 | £7.60 |
| 11 | Արագածոտնի մարզ՝ Կարբիի Գյուղապետարան | 200 | £3.80 |
| 12 | «Յորենի Հատիկ» Միջազգային Բարեգործական Հիմնադրամ | 600 | £11.40 |
| 13 | Արարատի մարզ՝ Նշավանի Գյուղապետարան | 400 | £7.60 |
| 14 | Արմավիրի մարզ՝ Բաղրամյանի Գյուղապետարան | 150 | £2.85 |
| 15 | Արարատի մարզ՝ Վարդաշատի Գյուղապետարան | 70 | £1.33 |
| 16 | ք Երևան «Լույսի Աստղ» Հաշմանդամ Երեխաների Ծնողների Հ/Կ | 400 | £7.60 |
| 17 | ք Երևան«Ավագների Ակումբ» Սոց. Հ/Կ | 250 | £4.75 |
| 18 | Տավուշի մարզ «Լենա» Հասարակության Զարգացման Աջակցող Կենտրոն Հ/Կ | 150 | £2.85 |
| 19 | ք Երևան «Ալեքս» ՀԲԿ | 100 | £1.90 |
| 20 | Տավուշի մարզ «Նոյ Աստղ» Հ/Կ | 300 | £5.70 |
| 21 | ք Երևան «Էրեբունի Համայնքի Զոհված Ազատ. Ընտանիքների» Հ/Կ | 200 | £3.80 |
| 22 | ք Երևան «Էրեբունու Համայնքի Ծերակույտի Խորհուրդ» Հ/Կ | 200 | £3.80 |

| | | | |
|---|---|---|---|
| 23 | ք Երևան «Հաշմանդամների Հայկական Ասոցիացա» Հ/Կ Էրեբունի համայնքի մասնճյուղ | 100 | £1.90 |
| 24 | ք Երևան Էրեբունի Համայնքի Վետերանների Խորհուրդ | 100 | £1.90 |
| 25 | ՀՀ ք Երևան, Աշխատանքի և Սոցիալական Հարցերի Նախարարություն | 300 | £5.70 |
| 26 | Կոտայքի մարզ «Շենացնենք Մեր Գյուղը» Հ/Կ | 200 | £3.80 |
| 27 | ԼՂՀ ք Շուշի «Հույսի Արցախ» ԲՀԿ | 800 | £15.20 |
| | | 10150 | £192.85 |

«Շողիկ» ՀԲՀԿ

տնօրեն՝ Գ. Սինանյան /........................./

12.11.2012թ

15/47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 950 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 26-ի N 3/3.8-2/15358-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 21-ի N ԴԴ/22/11602-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 22-ի N ՎՄ/3-6/12527-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական սարքի (դեղորայքային պատիճների փակման համար) (1 տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 711.48 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 158 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԵւՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 951 -Ա**

**քաղ. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 21-ի N 3/3.8-1/ 15194-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N ՎՄ/3-4/12355-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. Էֆ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գազշին ՄՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02229549) 2012 թվականի նոյեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազաֆիկացման շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 1900000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ- 952 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-904-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 21-ի N 3.8-1/15151-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 19-ի N ՎՄ/3-4/12356-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին» N Մ-904-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շարա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05505594) 2012 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 03-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի և այլ ապրանքների մատակարարում՝ 5000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**7 դեկտեմբերի 2012 թվականի N Մ - 953 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի նոյեմբերի 30-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 26-ի N 3/3.8-1/15361-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 26-ի N ՎՄ/3-4/12630-12 եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-130-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի «Բ» ենթակետի 3-րդ պարբերությունը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«56800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման ծրագրերում ընդգրկված և վերոհիշյալ վերապատրաստմանը մասնակցած առնվազն 20 հոգևորականի կողմից ներկայացված պիլոտային ծրագրերի իրականացման համար և 8200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ «Շողակաթ» հեռուստաընկերություն» ՍՊԸ-ի միջոցով,

հասարակական հարցերի վերաբերյալ եկեղեցու դերակատարության բարձրացմանը ուղղված նորս տեսաֆիլմերի պատրաստման համար»:

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետի «31 հունվարի, 2013 թ.» բառերը փոխարինել «20 սեպտեմբերի, 2013 թ.» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման առաջին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շողակաթ» հեռուստաընկերություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04715306) 2012 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N WVA/CC/06/FY12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված տեսաֆիլմերի պատրաստում՝ 3280000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 954 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ 3-ՐԴ ՓՈՒԼԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՕԺԱՆԴԱԿ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-1/15443-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի N 02/7427-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 26-ի N ՎՄ/3-4/12654-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2300000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուց-ման 3-րդ փուլի հեղինակային հսկողություն» օժանդակ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԵՐԾՇՊՀ» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506385) 2012 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N ԼՂ/ՀՀ-09/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման վերակառուցման հեղինակային հսկողություն՝ 2300000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավա-րություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապե-տության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«22» նոյեմբերի 2012թ.

# «ԼՂՀ Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն» ԾՐԱԳԻՐ

(օժանդակ)

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել ԼՂՀ Մարտունի քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Մարտունի քաղաք, ջրամատակարարման բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.300.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Մարտունի քաղաքի բնակիչները |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ օգոստոսի 14 –ից մինչեւ 2013թ. դեկտեմբերի 14-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ԵրՆԾՊՀ ՊՈԱԿ-ի կողմից ԼՂՀ Մարտունի քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման հեղինակային հսկողություն՝ 2.300.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 նոյեմբերի 2012 թվականի N Մ - 955 -Ա**

**քաղ. Երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 155 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի նոյեմբերի 21-ի N 3/3.8-1/15179-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի նոյեմբերի 21-ի N 02/7254-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի նոյեմբերի 23-ի N ՖԲ/ԱնՄ-5/8423-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի նոյեմբերի 22-ի N ՎՄ/3-4/12539-12 և Երևանի քաղաքապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի N 02/34-55780h-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ադոնցի 15, բն. 20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 3437500 դրամ արժողությամբ «Երևանի թիվ 155 մանկապարտեզի դռների և պատուհանների տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ.Մ.Մ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02214638) 2012 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և պատուհանների պատրաստում ու տեղադրում՝ 1996900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է

«Կամրջակ» ՍԲՀԿ

տնօրեն Բ. Ադամյանի կողմից

16 նոյեմբեր 2012 թ.

**«Երևանի Թիվ 155 մանկապարտեզի արտաքին դռների և լուսամուտների տեղադրում»**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 155 մանկապարտեզի արտաքին դռներ և լուսամուտների փոփոխում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | "Սթիխթինգ Մենսենկինդրե" ՀԿ Stichthing Mensenkinderen NGO հասցե Փոստրու 320 - 3840 AH Harderwijik Հոլանդիա : |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ » ՍԲՀԿ-ն իրավաբ հասցե՝ Զ.Քանաքեռցու, աշխ.՝ Կորյունի 3 -14/1 ՀՎՀՀ 01003187, Հեռ՝ 516-044, ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան, Քանաքեռ Զեյթուն համայնքի թիվ 155 մանկապարտեզ , հասցեն՝ Վահե Վահյան 1, ՀՎՀՀ 00825795, Հեռ 010-287880, բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 3437500 (երեքմիլոն չորս հարյուր երեսունյոթ հազար հինգհարյուր դրամ), որից 1440600 դրամը համաֆինանսավորվում է Քանաքեռ Զեյթուն համայնքը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Քանաքեռ Զեյթուն համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2012թվականի հոկտեմբերի մինչև.2013 թվականի մարտի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | "Ս.Ս.Ս" ՍՊԸ –ի հետ կնքվել է պայմանագիր դռներ և լուսամուտների գնման և տեղադրման կապակցությամբ 3437500 դրամի մչափով, որից 1440600 դրամը համաֆինանսավորում է Քանաքեռ Զեյթուն համայնքի կողմից |
| 10. | Ձեռք բերվեող(ներմուծվող) ապրանքներերի ու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | "ՍՍՍ"ՍՊԸ –ի հետ կնքվել է պայմանագիր դռներ և լուսամուտների գնման և տեղադրման կապակցության : Ընդհանուր դռներ և լուսամուտների ծավալը կազմում է 59,2 քառակուսի մետր : պայմանագրի գինն է 3437500 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ»ՍԲՀԿ-ի կողմից, համագործակցելով Քանաքեռ Զեյթուն համայնքի ղեկավարության և մանկապարտեզի տնօրինության հետ: |
